



No 3

U E P S

1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 3

Ս/և ծովի ափունք, «Աղբիւրի» գրական ալբոմ:
Սէրը փախստական (բանաստեղծութիւն) Ա. Եղեկեան
Արեգնազան Կամ Կախարդական աշխարհ (շարունակութիւն և վերջ) Ղ. Աղայեան
Ամպեր (Լերմոնտովից) Ք. Թաղէսեան
Յովհաննէս Հուս (շարունակութիւն) Փ. Վարդանեան

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեական զրոյցներ, (Դիսանդէից) Ն. Տէր-Աւետիքեան

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ո՛վ Կըհատար: Առձեռն Կամ գրպանի Կարի մեքենայ: Փողոցների մաքրելը ձիւնից: Շոգէազաց Մոսկուայում:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Վերկտորիա Ժազուհու յօրեկեանը:

ԶՈՒՆՐԱՄԻՔ

Առաջարկութիւններ: Մանկական խաղ «Ագապմի»: Բերութ: Պատասխան: Նախընթաց Նշ-ի մէջ եղած առաջարկութեան և հանելուկի բացատրութիւնը: Մի խնդիր:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Ընդածին Հակոբները Կրթութեան մասին Ա. Բէկնազարեան
Մի տարի Շվէյցարիայում («Մշակից») Գ. Արծրունի
Խառն լուրեր: Մեր ուսուցիչներին: Վարդանանց տօնը: Այսամանի դասախօսութիւնը: «Աղբիւրի» լրջութիւններ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Հարունակիւմ է «Աղբիւրի» 1887 թ. բաժանորդադրութիւնը: Նոր բաժանորդ զրուողները կըտանան արդէն լոյս տեսած №№ 1, 2 և 3-ն էլ:

Աշակերտները փոխանակ 5 ռ. կարող են վճարել 3 ռ. և կըտանան պլէմիաներն էլ:

Տպագրութեան համար պատրաստ է

ԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆՈՒԻ

ՍԶԳԱՅԻՆ ՎԷՊԵՐ

Սրա մի մասը քսան տարի առաջ տպագրուեցաւ Լիսաւս պըռասա և տպագրական սխալներով լիքը, բայց այսու ամենայնիւ Կարգէ դուրս ընդունելութիւն գտաւ, և ամենքն էլ անհամբեր սպասում էին երկրորդ մասի տպագրութեանը: Այժմ թէ առաջինը և թէ երկրորդը միացրած, լրացրած և ամբողջացրած է. օժտանալի ող ձեռքերի է սպասում, որ լոյս տեսնի: Բաժանորդագրելն երկու մասէն է. Կարելի է ուղարկել «Աղբիւր» խմբագրութեանը և Կենդրոնական Կրթական ժողովին: Ամեն մի տասը բաժանորդ գտնողը կամ գրողը մի օրինակ ձրի կըստանայ: Մասնաւոր նամակով զիմած չենք մեր ծանօթներին և բարեկամներին, յուսալով որ նրանք ինչ որ կարող են անել՝ կանեն:

Ղ. ՍԱՅՏԱՐԱՆԻ

ՄՇԱԿ

Հրատարակում է Թիֆլիսում, նոյն զիւրքով և նոյն սրբագրմանով: «ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռ. է, վեց ամսուանը 6 ռ.:

Գրուել «ՄՇԱԿԻՆ» Կարելի է ԽՄԲԱԿՐԱՅԱՆԸ (Բարօճակայա և Բաղարեայա փողոցներին անկիւնում, Թամազեյի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿԻՆ» գրուելու համար պէտք է զիմել հիտակալ հասցէով. ТИФЛИСЬ, Редакция газеты «МШАКЪ». Իսկ արտասահմանից. Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK»

Խմբագրական Գրիպոր ԱՐԾՐՈՒՆԻ




«առեկաղարդ» Հրատարակութեան տնիսը երկու անգամ տարեկան գինը 4 ռ.: Հրատարակում է Պօլսում. ստորագրուել Կարելի է «Աղբիւր» ամսագրի խմբագրատանը:

ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆՍ ՄԵՋ ՎԱՃԱՌՎԱՆԻ ՄԵՐ ՄԵՐ ՀԵՏԵՆԱՆԻ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	ռ.	լ.
1) «Աղբիւր» 1883 թ. փառապալմ	5	—
նոյնը անկաղմ	4	—
2) « 1884 թ. փառապալմ 4	4	—
նոյնը անկալմ	3	—
3) « 1885 թ. փառապալմ 5	5	—
նոյնը անկաղմ	4	—
4) Փայտաշէն խրճիթի սպիտակ տունը (Ջեմա Գարեշիլէի կենտոնը)	60	—
5) Հալալ մըլէն (պատկերապարտ)	40	—
6) Ժան Բատիստ Լիւլիէ մանկալմ	10	—
7) Ռիկէ ձիւնի I սերիա	30	—
նոյնը II սերիա	05	—
8) Բուսական աշխարհի մշակութեան և անկալի ծառի կենտոնը	30	—
9) Չարաձալ Սրտի արեւմտեանը (38 պատկերներով)	50	—
10) Ֆրանկոֆ զիւրքայն (նորմանական հին զրպից, պատկերապարտ)	40	—

Ն. Տ. ԱԻՆՏԻՖԵԱՆ Քնար խօսնակ	50	—
ԼիՏվոս Պօլսանի ուսուցչի օրագրից	20	—
ՍԼՅՈՆՍ ԳՕԴԵ Ներկա մանրակալ	15	—
ԱՆԿԵՐՈՒՆ Սոխակ և խղարած	20	—
ԴԻԿԵՆՍ Հարս և սկիտուր	15	—
Կ. Մ. ՇԱՀԱՅԱՐԱՆԻ Ղըլըցի կըհանոյց պընը-փէշակը (Ղալալի կենտոնը)	20	—

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅ 1887 ԹՈՒՍԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ



ՄԻԱՄԱՆԱՅ ԳՐԵՍԿԵՐԱԶԱՐԻ ՀԱՆՐԱՅԻ

(ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍԻՍԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Տարէնը լոյս է տեսնում 12 համար, 3—4 տպագրական թերթից յւրաքանչիւր համարը)



Երկայ 1887 թուականից «Աղբիւրը» կը հրատարակուի նոյն ուղղութիւնով՝ անհամեմատ շքեղ քան նախորդ տարիները, դիրքն աւելի մեծացրած, փոխանակ 2—3 թերթի՝ 3—4 թերթ, և ծնողների բաժինը կը հրատարակուի՝ տարին երեք անգամի փոխանակ, ամեն ամիս առանձին տետրակներով:

Պրէմիաները կը լինին մեր թարգմանչաց՝ սրբոց ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՎԱՅ մեծադիր (62 սանալի երկարութիւնով և 45 ս. լայնութիւնով) վիմագրուած պատկերները: Այդ պրէմիաներն արդէն պատրաստ են և բաժանուղ զրուոյն անյապաղ կը տանալ թիֆլիզում խմբագրատանը, իսկ օտարաքաղաքացիներին կուղարկուեն բաժանուղ ազլինն տոսանալուց լետոյ իսկոյն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրալէպեր, զրոյցներ, առակներ, հէքեաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ: II) Բանաստեղծութիւններ: III) Գիտութիւն և արուեստ: IV) Հետաքրքիր տեղեկութիւններ: V) Այլն այլք: Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Ն Ի Ք

VI) Մանկական, ֆրեթէլեան, շախմատի և այլ խաղեր: Բերուներ, Թուաբանական խնդիրներ: Անեկդոտներ, հանելուկներ, շուտասէլուկներ: VII) Երգեր՝ ձայնագրած (նօտաներով):

ՄԱՍՆ ԵՐԵՐՈՐԴ

VIII) Կըթուլթեան և դաստիարակութեան վերաբերալ յօդուածներ և աեղեկութիւններ: IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ: X) Մատենախօսութիւն և նոր գրքեր: XI) Խառն լուրեր: XII) Պատասխաններ: Յայտարարութիւններ:

Դարձնալ կրկնումենք՝ որ թէ ներկայ 86 եւ թէ անցեալ 85 թուականների պիտարուայ հէնց սկզբից ստիւտարած չլինինք «Աղբիւրի» բաժանորդարութիւնը դադարեցնելու № 2-ի ՍՊԱՌՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ: Խնդրում ենք մեր բաժանորդներին վերանորոգել, եւ թէ նոր կամեցողներն անապարեն ստորագրուել, որպէսզի մենք եւս կարող լինինք մօտաւորապէս որոշիլ տպուելու օրինակների քանակութիւնը:

«Աղբիւրը» տարեկան բաժանորդադրելը 3 ռ. է, անբաժան են դըրանցից և պրէմիաները, որոնց գինն է 2 ռ. ուրեմն «Աղբիւր» ստանալ կամեցողները պէտք է ուղարկեն թէ «Աղբիւրը» տարեկան բաժանորդագրելը և թէ պրէմիաների վճարը ընդամենը 5 ռուբլի:

Հասցէն՝ Тифлисъ, Редакция «Агбюръ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR»:

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՅ

ԱՂԲԻՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ԴԱՏԱԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՐԱՆԵՐԸ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 3

Մ Ա Ր Տ

ԹԻՖԼԻՉ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ


ՕՐԲԱՆԵՆ ՓՈՂՈՑ, № 1 | 2

1887



ՍԵՒ ԶՈՎԻ ԱՓՈՒՆՔ
«ԱՂԲԻԻՐԻ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԲՈՄ

Дозволено цензурою, Тифлисъ, 24 февраля 1887 г.
Типографія П. Мартиросіанца, на Орд. ул., д. № 1 и 2



ՄԵՐԸ ՓԱԽՍՏԱԿԱՆ


(Մէօփաբոյն)

տափի մի օր կորած Մերը փրնարելիս,
Բարձրը ձայնով կանչում էր.
Արդեօք մէկը սլատաՀմունքով տեսած չէ՞
Ճամբաների վերայ Մերը մոլորուած:
Փախտականն այն իմն է.
Նորան ինձի ցոյց տուողը
Ապահով կունենայ կիպրեան մի սլաչ
իրեն վարձ:

Ասիւ մէկը թէ զըտնելով բըռնէ նորան բերէ ինձ,
Ոչ թէ մի սլաչ, այլ աւելին թող լուսույ:
Քրտանի մէջ կարող է մարդ
Որդուս բազում նշաններով որոշել.
Սպիտակ չէ, բայց զոյնովը կըրակի է նա նըման,
Խորամանկ և բոցավառ բրբերով.
Նենգամիտ է, քաղցր խօսող, տուզըբոյց,
Ձայնը անուշ. միայն եթէ բարկանայ՝
Գազանային է սիրտը.
Խաբեբայ, ճըշմարտութեան ոխերիմ,
Վայելքին մէջ անտանափար.
Մաղը խուրդոյ, և կերպարանք՝ բըռնաւոր.

Կարճ են այժմ իւր բազկունք, սակայն Հեռու,
 Հատ Հեռու արձակում է իւր նետը՝
 Մինչև Ստիւքս, մինչ ի սահման Պլուտոնի:
 Մարմինը մերկ, այլ միտք ծածուկ.
 Թուեր ունի, ոստոստում է զերթ թռչուն,
 Փոխ առ փոխ նրստում է սորա նորա սրբտումը:
 Փոքրիկ է իւր աղեղը, բայց աղեղի վրայ փռքին.
 Փռքինն էլ է իւր փոքրիկ, բայց հասնում է մինչ երկինք:
 Ուսիցը կախ, լի թունաւոր նետերով,
 Կրում է ոսկեայ կապարճը, և ինձ իսկ
 Այն նետերով նա շատ անգամ է խոցել:
 Ամէն, ամէն բան նորանում անգութ է,
 Սակայն ոչինչ չէ այնպէս, որպէս փոքրիկ այն ջահը,
 Որ իւր ունի նա ձեռքում, որից երբեմն
 Արեգն ինքնին հուր է առնում բոլրոքվում:
 Արդ, եթէ պատահմամբ նորան բռնես՝
 Կարեկապաճ առ բեր ինձ:
 Մի, չխրդճաս դու նորան, թէ ձեռնայ լաց լինել.
 Տես՝ չլինի խաբէ քեզ, և սրնդակապ բեր նորան.
 Ապա եթէ ծիծաղի, թէ ուզենայ պաչել քեզ,
 Մի թողներ, նենգաւոր է իւր պաչը,
 Թունաւոր են շրթունքը:
 Իսկ թէ ասէ. «ն, առ՝ քեզ,
 Քեզ եմ տալիս այս զէնքեր. դու մերժէ.
 Խաբէական է իւր պարզւ, և կըրակ են այն զէնքեր:

Ա. Մ. ԵԶԵԿԵԱՆ



ԱՐԵՓՆԱԶԱՆ

ԿԱՍ

ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



Թէկուզ Անմահութիւն ուզիս
Սիրով կու ճարիմք քի համա:

Սոյալ-Նոյն

սողիկի փասխտա-
կան Սէրը Հանդի-
պելով Նունուֆա-
րին՝ իր Հրեղէն

Թունաւոր նետերը շատ խոր է ցցել
նրա սրտի մէջ: Վէրքը մահացու է.
էլ ապրելու յոյս չկայ...

Ել ոչ ծաղրածուի կատակները,
ոչ վէզիւրի կնոջ հոգատարութիւնը,
ոչ հօր աղաչանքն ու հառաչանքը

չեն ազդում նրա վրայ:

Լեզու չունի, որ խօսի, ուժ չունի, որ ձեռքը շարժէ:

Ակնապիշ նայում է դէպի վեր, կարծես Երկնքիցը
լինի սպասում իր փրկութիւնը, կամ ուզում լինի շուտով
Թուշիլ դէպի Երկինք:

Թագաւորը և բոլոր պալատականները՝ ձեռքները խաչ
արած՝ վիզրները ծռած՝ նայում էին Նունուֆարի երեսին,
և ախ ու ոհ քաշելով՝ խոստովանում իրանց անպօրու-
թիւնը Ամենակարողի կամքի առջև:

Այս աղեկտուր բոլորէին մէկ էլ լսուեցաւ, որ Արէգը եկել է:

Նունուֆարի աղախինը ամենից շատ վազեց Արէգի մօտ և շտապեցրեց նրան, ասելով —

— Զուտ արա, «եկ տես», վերջին շնչումն է, աչքը քեզ է մնում...

— Ահա գալիս եմ, պատասխանեց Արէգը. հիմա «կը գամ և կըրտենեմ» քո Նունուֆարին...

Լուռ հանդիսականների միջով լուռ ու մունջ անցաւ Արէգը, մօտեցաւ Նունուֆարի մահճին, հանեց Անմահական ջրի շիշը, մի կաթիլ կաթեցրեց բամբակի վերայ և քսեց Նունուֆարի մեռելատիպ շրթունքներին:

Նունուֆարի աչքերը սլարդուեցան:

Արէգն այդ նկատեց և մի քանի կաթիլ կաթեցրեց ուղղակի բերանի մէջ:

Նունուֆարը երկու ձեռքով ծածկեց երեսը...

Նա տեսաւ Արէգին և... ճանաչեց:

Նա մի նոր կեանք զգաց, կեանք աշխուժով լի, երևակայութեամբ ճոխացած...

Ձեռներով ծածկեց երեսը, որ երևակայութիւնն ամփոփէ: Ամփոփէ երևակայութիւնը, որ այդ բոլորէի երկնացին զուարճութիւնն ու զմայմունքը լի-ու-լի վայելէ:

— Արէգը եկել է, ասում է նա ինքն իրան, երեսը ծածկած երկու ձեռքով, իբրև երկու վահանով, որ ուրիշ տպաւորութիւնների տեղի չտան: — Արէգը եկել է, կրկնում է Նունուֆարը, և ես առողջ եմ. բոլորովին առողջ, շատ առողջ: Ես զգում եմ, զգում եմ, որ շատ առողջ եմ, և... Արէգն էլ եկել է... Ես տեսայ: Նա ինձ մօտ կանգնած է այս բոլորիս: Ես զգում եմ նրա ներկայութեան անմահական հոտը: Անմահական էր նրա տուած դեղը: Հէնց ինքն էլ մի անմահ Ողի է: Ի՞նչպէս մեծացել է, ինչ-

պէս առ ոչդացել, ի՞նչ նորածիլ բեխեր ունի, ի՞նչ զանգուր մօրուք... Բանամ երեսրս, մէկ էլ նայեմ...

Նունուֆարը բաց արաւ երեսը, և նայեց Արէգի երեսին այնպիսի Հայեացքով, որ միայն մօր Հայեացքն է լինում իր երեխին «Հաղմ» կամ «ճիւկն» տեսլիս... և կըրկին փակեց երեսը:

Այդ Հայեացքը, որի մէջ ամփոխուած էր կենդանութեան հրախալ ողին, ամենքը տեսան, և ամենքն էլ, կարծես խօսք մէկ սրած, միաձայն քրքիջ բարձրացրին՝ փնտ փնտ ծիծաղելով: Այդ ծիծաղից անմասն չմնաց և ինքը Նունուֆարը: Նա էլ ծիծաղեց. կարծես ուրիշների տեղիք տալուն էր սպասում, որ մի կուշտ ծիծաղի:

Այս էլ որ տեսան մի վայրկեան առաջ սղաւոր Հանգիստականները, բոլորովին միամտուեցան. էլ ուշադրութիւն չդարձրին Նունուֆարի վրայ, և սկսեցին փոխ առ փոխ զգուել ու Համբուրել Արէգին: Թագաւորը իր զիրկն առաւ Արէգին և սկսեց երեխայի նման հեկեկալ: Թագաւորի ուրախութեան զգացումն անսահման էր: Նա մի վայրկենում երկու ուղի էր գտել, մինը կորած տեղից, միւրը մեռած տեղից: Ամենքի աչքերից ուրախութեան և զմայմունքի արտասուք հոսեց:

Հանգիստականների այստեսակ իրարանցումից օգուտ քաղելով՝ Նունուֆարը ծտի պէս վեր թռաւ տեղիցը, փախաւ մտաւ մի այլ սենեակի, այնտեղ շուտով հազնուեցաւ, զուգուեցաւ թագուհու վայել դարդարանքներով և դուրս եկաւ Հանգիստականների մէջ այնպէս ուրախ ու զուարթ և այնպէս առողջ, որ հիացան ամենքը, բայց մանաւանդ Արէգը, որի համար մի բոլորովին նոր արեւ ծագեցաւ:

Եթէ Արէգը մի վայրկենում վերակենդանացրեց Նունուֆարին, հիմա էլ Նունուֆարը՝ իր գեղեցկութեան ազդեցութեամբ՝ Արէգի այնպիսի երակները շարժեց, ո-

րոնց միջով կարծես մինչև նոյն ըոպէն դեռ արիւն չէր խաղացած: Արէզը մի նոր կեանք զգաց իր մէջ, մի նոր զգացմունք անստՀման Հաճոյական, բայց ինքն իրան Հաշիւ տալ չկարողանալով և մի և նոյն ժամանակ այդ իրան Համար տարօրինակ զգացմունքը զսպել ուղենալով՝ սկսեց խօսիլ խելքը թռցրածի պէս:

— Հիմա եմ զգում, որ ես՝ էլ ես չեմ...
Բայց թէ ես ո՞վ եմ, — այդ էլ չգիտեմ.
Ինձ յափշտակեց Աղջիկ Աղաւնին,
Եւ տեղըս դրաւ այժմեան Արէզին.
Անիւրաւ աղջիկն իմ ուշքըս տարաւ,
Արէզնադանիս լըճի մէջ առաւ,
Իր քաղցըր երգով ինձ քնացրեց,
Եւ իմ տեղըս նա մի ուրիշ դրեց...

Հանդիտականները բերանաբաց նայում էին, և ոչ մի բան չէին Հասկանում Արէզի սոսաճներէց:

— Ախոս տղայ, երևի խելքը կորցրեց, ասում էին շատերը:

Վերջը Նունուֆարը մօտեցաւ Արէզին և խղճալի կերպով ասաց —

Արէզ, իմ Հոգեակ, ի՞նչ է այդ, ի՞նչ կայ,
Գուցէ իմ տեսքով քեզ դիւր չի եկալ.
Դու Հանգիստ եղիր. ես կերթամ, կերթամ,
Որ ինձ չտեսնես էլ ոչ մի անգամ...
Ես սիրում եմ քեզ, գիտէ Երկինքը,
Բայց այդ չի ուզում գուցէ Նա Ինքը,
Որ չի թոյլ տալիս քեզ ինձ ճանաչել,
Եւ ինչպէս որ կամ, ինձ այնպէս տեսնել.
Երթամ ուրեմն իմ սև օրըս լամ,
Քանի որ էլ քեզ պիտի չերևամ...

— Ո՞ւր, ո՞ւր, սպասիր, ես քեզ չեմ թողնիլ,
 Առանց քեզ մի օր՝ էլ ես չեմ ապրիլ.
 Թող երկինք դետինք իրար խառնըւին,
 Դու կը պատկանիս միայն Արեգին.
 Թող ամբողջ աշխարհ տալին ու վրայ ըլի,
 Էլ քեզ ինձանից ոչ ոք չի խըլի.
 Արարած աշխարհ ես պըտըտեցայ,
 Դեղեցիկ, սիրուն, շատերին տեսայ,
 Բայց քեզ պէս չքնաղ, անհատ, աննման,
 Քեզ է ստեղծել Երկինքը միայն.
 Դու իմն ես, իմն ես, սիրուն Նունուֆար,
 Իմ բոլոր կեանքս կըտամ քեզ համար.
 Ինչ սիրտըդ ուզի, ինչ որ կամենաս,
 Հրամայիր ինձ, իսկոյն կըստանաս:
 Իմ ասածներըս դու չհասկացար,
 Ինդուր ես կարծում, թէ ինձ գիւր չեկար.
 Ես այն չեմ, այն չեմ, ում որ տեսել ես,
 Նա գնաց, կորաւ երևութի պէս.
 Ես էլ եմ Արեգ, բայց ոչ առաջին,
 Նրան գողացաւ Աղջիկ Աղաւնին...
 — Եթէ այդպէս է, ինձնից հեռացի՛ր,
 Դու ինձ կեանք տուիր, վարձըդ ստացիր:
 — Ես չեմ կեանք տուել, ի՞նչ վարձ կամ ի՞նչ գին.
 Դու ինքդ ես իմ կեանքն, իմ սիրտն իմ հոգին...
 — Էլ ես կեանք չունիմ և պիտի մեռնիմ,
 Երբ չկայ Արեգ, էլ ինչո՞ւ ապրիմ...
 — Ի զուր մի՛ մեռնիլ, ես էլ եմ Արեգ,
 Մի՛թէ ես չունիմ նորա չափ արժէք...
 — Բայց դու ուրիշ ես, ինքքդ ես ասում...
 — Այդ ես ինքքս էլ լաւ չեմ հասկանում...
 — Սպասեցէք, սպասեցէք, ես վերջ կըտամ ձեր վէ-

ճին, ասաց թագաւորը: Արէգ, ասա ինձ, Հոգիս, դու
ո՞ւմ որդիքն ես.

— Արման իշխանի որդիքն էի մի ժամանակ, բայց
Հիմա չգիտեմ—էլի նրա որդիքն եմ, թէ՞ մի ուրիշի:

— Քո այդ պատասխանն է ահա, որ մենք չենք
Հասկանում, բայց քեզ լաւ ենք ճանաչում: Դու մեր Ա-
րէգն ես, մի և նոյն գեղեցիկ Արէգը, միայն մօրուքդ է ա-
ւելացել ու բեխերըդ...

— Սպասիր, սպասիր, խնամի թագաւոր, մէջ ընկաւ
ծաղրածուն: Աչքըդ լոյս, փեսադ եկել է, բայց ուրախու-
թիւնից ինքն իրան կորցրել է, Հիմա ման է գալիս՝ չի
գտնում: Արէգ եղբայր, եկ՝ ես ու դու մի պայման ա-
նենք. ես դառնամ «դու», իսկ դու դառ «ես». այնուհե-
տեւ Նունուֆարը կը դառնայ «իմ», իսկ չիմարը՝ «քեզ».
Համաձայն ես... Ասաց ծաղրածուն և սկսեց երգել.

Ա՛խ, ես չիմար եմ անչափ,
Բայց ոչ այս տղայի չափ.
Ես որ մի աղջիկ գտնեմ,
Ի՛լ չեմ ասիլ—«ես» ես չեմ...»
Եարալլալի, շարալլալի
Հայդէ, չիմար, պար արի...

Մինչդեռ ծաղրածուն այսպէս երգով ու պարով զուար-
ճացնում էր Հանդիսականներին, ներս մտաւ Արմանը:

Արէգն իր Հօրը տեսնելուն պէս՝ վազեց գիրկն ըն-
կաւ և մի քանի ուրախութեան բացագանչութիւնից յե-
տոյ՝ փսփսաց ականջումը.

— Գիտե՞ս, Հայրիկ, ես Հիմա տղայ եմ, տղայ, իսկ
և իսկ տղայ, ճշմարիտ տղայ. կարո՞ղ ես երևակայել...

— Ի Հարկէ, տղայ ես, Հոգիս, Հապա ի՞նչ պէտք է
լինէիր...

— Բայց չէ՞ որ, Հայրիկ, բայց չէ՞ որ... ախր՛ր...

— Դու առաջ էլ էիր տղայ, Հոգիս, բայց այդ չգիտէիր դու. նոր ես սկսել ճանաչել քեզ. առաջ անմեղ էիր ինչպէս Հրեղէն, Հիմա մարդ ես դառել Հոգեղէն, բայց այդ վնաս չունի, Հոգիս...

— Մ... եթէ այդպէս է, ուրեմն ես՝ ես եմ եղել. վաղեմ Նունուֆարին ասեմ...

Արմանը մօտեցաւ Թագաւորին և սկսեց շշնջալ նրա ականջին բանի էութիւնը, իսկ Արեգը վաղեց Նունուֆարի մօտ:

Երբ որ Արեգը նորից մօտեցաւ Նունուֆարին աւելի ուրախ ու զուարթ գէմքով, Նունուֆարը բռնեց Արեգի ձեռքից մի աջապիսի քնքոյշ ժպիտով, որ Արեգը քիչ մնաց նորից թուցնէր խելքը:

— Դու մեր Արեգն ես, աջապէս չէ՞, ասաց Նունուֆարը:

— Ի հարկէ, Հոգիս, հապա ո՞վ պէտք է լինիմ, պատասխանեց Արեգը:

— Ուրեմն մենք էլ չենք բաժանուիլ միմեանցից: Եթէ դիտենաս, ինչքան մաշուել եմ քո կարօտով... Հիմա եկել ես, և յանկարծ ասում ես՝ «Ես՝ ես չեմ». հապա ո՞վ ես, որ դու չես:

— Ոչ, ո՛չ, Հիմա ես ես եմ. յիմարն ինձանից խելօք է... Արի չոքենք Թագաւորի առջև, և նա օրհնէ մեզ... Բայց, ոպասիր, հայրիկիս չհարցրի, թէ ո՛ւր են իմ քոյրերը:

— Նրանք այստեղ են: Քո գնալուց յետոյ ես ձերոնց բերել տուի, որ քո կարօտը նրանցից առնեմ: Ես արդէն ուղարկեցի իմաց տալու, Հիմա կըզան ուր որ է...

— Ինչքան բախտաւոր եմ ես ուրեմն, որ այդքան բարի ես եղել դու... Ուրեմն դեռ չշտապենք. զնանք մեր հագուստը փոխենք. Հիմա միտքս ընկաւ: Անդամ Թագաւորից ես քեզ համար էլ ինձ համար էլ հարսանեկան հագուստ եմ բերել: Նա ընծայեց այդ հագուստները և

խնդրեց, որ անպատճառ այդ ունենանք հագներիս մեր հարսանիքին, որին՝ իր ասելով՝ ինքը հոգւով ներկայ կը լինի: Ես չէի ընդունում, որովհետև այս բոլէի քաղցրութիւնն այն ժամանակը երևակայել չէի կարող: Զատ բաներ եմ տեսել, յետոյ կը պատմեմ քեզ: Չեմ տեսել միայն քեզ պէս մի չքնաղ էակ... Ինչքան գեղեցիկ ես դու, Նունիկ...

Այսպէս խօսելով, ձեռք ձեռքի տուած, դուրս եկան Արէզն ու Նունուֆարը, բայց երկար սպասեցնել չտուին:

Մի քանի րոպէից յետոյ տեսարանը մի կախարդական ասեմ թէ երկնային կերպարանք ստացաւ:

Պալատի ընդարձակ դահլիճը լցուեցան թէ տղամարդիկ և թէ կանայք, շքեղ հագուստներով զարդարուած: Այստեղ էին և Արէզի քույրերը:

Երբ որ Արէզն ու Նունուֆարը ներս մտան Անգասի ընծայած հագուստովը զարդարուած, անթիւ անգին քարերի ճառագայթները՝ ծիրանի ծովից ծագող արեգակի պէս՝ գոյնզգոյն լուսով լուսաւորեցին ամբողջ դահլիճը: Չոքեցին թագաւորի առջև, որ օրհնէ իրանց:

Թագաւորը մի քանի րոպէ չկարաց խօսիլ, հագիւ էր կարողանում բռնել ուրախութեան արտասուքը: Վերջապէս սկսեց օրհնել մեր նորահասներին՝ ասելով —

Ո՛վ Երկինք,

Ես մի հողեղէն,

Մի թոյլ արարած,

Որ չարն ու բարին

Դեռ լաւ չգիտէ,

Իմ սրտին նայիր,

Եւ ո՛չ իմ լեզուին.

Եւ քո իսկ ձեռքով

Ինչ որ բարի է,

Դու այն տուր սրանց:

Ի՞նչ ունիս բարի,
Քո ծոցում պահած,
Որ մինչև այսօր
Ոչ մի հողեղէն
Գեռ չի ստացած,
Դու այն տո՛ւր սրանց:

Դու մինչ այսօր էլ
Հատ բան ես տուել—
Արև վառվռուն,
Աստղեր շողշողուն,
Այեր քաղցրաշունչ,
Ջեփիւռ անշըշունջ,
Անձրև յորդառատ,
Յօղ մարգարտահատ.
Աղբիւրք դովարար,
Վտակներ վարար,
Գոյն-գոյն ծաղիկներ,
Ծառեր մրգաբեր,
Անտառներ մարմանդ,
Դաշտեր արդաւանդ,
Լեռներ հովասուն,
Գետեր դալարուն,
Լճակներ վճիտ,
Սար, ձոր և հովիտ...
Այս ամեն բարիք,
Ո՛վ պաշտօն երկինք,
Թոյլ տուր վայելեն,
Քեզ փառարանեն...

Թագաւորն իր օրհնութիւնն աւարտած չաւարտած,
մի նոր լուսով լուսաւորուեց դահլիճը: Մի ծիածան կա-

պուեցաւ, ծիածան անտես, աննման, հրաշալի աչնքան, որ ամպերում կապուող աղեղը նրա մօտ մի մռայլ ամպ կարելի էր համարել... Ի՞նչ լեզու կարող է պատմել, ինչ զրիչ կարող է գրել, կամ ի՞նչ վրձին կարող է նկարել...

Ամենքն էլ նրան էին նայում և տեսնում էին թէ ինչպէս էին կազմվում նրա գոյները հետզհետէ. կարծես աներևոյթ ոգիք՝ արագ արագ վազելով երկնային մատնե-րով մի նոր ծիածան լինէին հինում, և երկնքումը լի-նին կապելիս Արեգի ու Նունուֆարի հարսանեկան Կա-նաչ-Կարմիրը: Յիրաւի, այդ Կանաչ-Կարմիրը, թվում էր, թէ դաշլիճի առաստաղից շատ և շատ բարձր է և շատ հեռու:

Եւ ահա, երբ ծիածանն ամբողջապէս պատրաստ էր, նրա վրայով, իբրև մի լուսեղէն սանդուղքով, ցած իջան մի խումբ երկնային թագուհիք՝ աստղերի ճառագայթ-ներից և ձիւնափայլ ամպերից գործած հագուստով մի-մի արեգակ... Բայց ի՞նչ արեգակ... Եթէ ցերեկ լինէր՝ և արեգակը նրանց տեսներ, ամպեղէն մի քօղ կը քաշէր երե-սին, որ տեղի տար նրանց լոյսին...

Բոլոր երկնային օրիորդները, որոնք թռւով մինչև ինը հոգի էին, երկերկու պսակաձև փունջեր ունէին ձեռ-ներին, որը ցօղից քաղած, որը ծաղիկների գոյնից ու հո-տից փնջած, որը վճիտ աղբիւրների բիւրեղացած գոհար-ներից հաւաքած, որը քաղցրաշունչ զեփիւռից ու գովա-լար հովերից հիւսած, որն արևի շամանդաղի մէջ եղած գոյնզգոյն հիւլէներից կազմած... մի խօսքով՝ լուսեղէն մատներով բնութեան բոլոր դարդերի բուն ոգին էին քա-ղել ու փնջել: Այդ փունջերից անմահական բուրմունքով լցուեցաւ բոլոր դաշլիճը:

Ամենից առաջ մօտեցան Աղբիւրիկը, Յօղիկը և Ծաղ-կիկը և իրանց պսակները տալով Արեգին ու Նունուֆա-րին՝ ասացին —

Ա Ղ Բ Ի Ի Ր Ի Կ

Ես կարկաջունն եմ Աղբիւրիկ,
Եկել եմ ձեզ աչքալուսիկ,
Բերել եմ ձեզ բիւրեղահիւս
Ականակիտ, վճիտ փնջիկ:

Յ Օ Ղ Ի Կ

Ես գոհարիկն եմ բոյսերի,
Ես մարգրիտն եմ հովիտների,
Ահա իմ փունջ ցօղից քաղած
Հաղարաւոր կանաչների.

Ծ Ա Ղ Կ Ի Կ

Ես Ծաղկիկն եմ մշտադալար,
Ես անթառամն եմ բեղմնարար,
Բոլոր ծաղկանց գոյնն ու հոտը
Ահա բերել եմ ձեզ համար...

Այսպէս մօտեցան և միւսները, և մի-մի բան ատե-
լով՝ իրանց պտակները նուիրեցին Արեգին ու Նունուֆարին...

Այս տեսարանը մի տիրութիւն և թմրութիւն բե-
րաւ հանգիսականների վրայ: ձատերը բոլորովին վերա-
ցան ապշութիւնից: Ամենից շատ տիրեցան աղջկէրքը:
Նրանց գեղեցկութիւնն աղօտացաւ, թխացաւ ու մզացաւ
հրեղէնների գեղեցկութեան մօտ: Երիտասարդները դար-
ձան մի տեսակ ապուշ վալրենիք. նրանց փտահութիւնը
բոլորովին անհետացաւ...

Միայն Արեգն էր ուրախ, միայն նա էր ազատ այդ
ընդհանուր ապշութիւնից: Այդ հոգեկան թմրութիւնից
հանգիսականներին յթափելու համար՝ Արեգը դարձաւ
լուսեղէն հիւրերին և ասաց.

— Ո՛վ երկնային թագուհիք, դուք ձեր շնորհաբեր այցելութիւնովը ինձ չափազանց ուրախացրիք: Բայց, նայեցէ՛ք, այս ի՛նչ ապշութիւն է, այս ի՛նչ տխրութիւն, որի մէջ ընկղմուել են ամենքը: Մի՛ գարմանաք: Այսպէս ենք մենք տկար հոգեղէններս. ի՛նչ որ չափազանց բարի է, չափազանց գեղեցիկ, նոյնը վայելելու կարողութիւնը չունինք մենք մահկանացուներս: Ճշմարիտ բարւոյ և գեղեցիկ ճաշակից զուրկ արարածներ ենք մենք: Ներշնչեցէ՛ք մեր սրտերի մէջ վսեմ զգացմունք և բարձրագոյն կարողութիւն, որ ձեր երկնային շնորհաբերութիւնը լիապէս վայելել կարողանանք: Խնդրում եմ՝ ուրախանաք, ինդաք և զուարճանաք իմ հարսանեաց հանգիսին և ուրախացնէք ամենքին երկնային ուրախութեամբ...

Բանից երևաց, որ մեր լուսեղէն օրիորդները, թէև մարմնացած՝ բայց չափազանց համեստ, չափազանց ամօթխած և երկիւղած են եղել. պէտք է եղել, որ նրանց ստիպեն: Արեգի խօսքերից խրախուսուելով՝ առաջ անցաւ Ծաղկիկը և իբրև կարգադրիչ՝ մի պար ոտքեց: Ծիածանի կամարը՝ իբրև մի երկնային բիւրաղի քնար՝ թռթռացրեց իր հաղարեւանգ թելերը և այնպիսի եղանակներ հնչեց, որ թէ հոգեղէնների և թէ նոյն իսկ հրեղէնների մէջ ձգեց հրաբորբոք մի աշխոյժ: Ամեն ոք սկսաւ թև առնել թռչիլ չափազանց ուրախութիւնից: Ծերերն անգամ թռչկոտում էին և ջահիլների դանդաղկոտութեան վրայ ծիծաղում: Հետզհետէ այնքան տաքացան, որ էլ զուարճութիւն չմնաց, որ չանեն: Յօղիկն ու Աղբիւրիկը այնքան զուարճացրին, որ էլ ոչ ոքի մէջ ուժ չմնաց շատ ծիծաղելուց: Մերթ Արեգի մօրուքիցն էին բռնում, մերթ Նունուֆարի թշերը կստում, և զանազան հաճոյալիան բաներ փսփսում նրանց ականջին...

Արեգը Յօղիկի հետ պարելիս՝ մի խոր հայեացք ձրգեց նրա երեսին և փսփսաց ականջին.

— Ո՛վ Համեստախալ օրիորդ, ես կարծես ճանաչում եմ քեզ... այն, ճանաչո՞ւմ դա՞րիս ես, բայց չեմ վստահանում ասել, վախենում եմ, թէ մի դուցէ սխալուած լինիմ:

— Սխալուած չես, Արէզ, պատասխանեց Յօղիկը, ես նա ինքն եմ:

— Աղաւնի Աղջիկը.

— Այն: Սրանք էլ բոլորն իմ քոյրերս են...

— Օ՛... դու իմ Աստուածահին ես... դու ինձ նորեց տեսեցիր...

— Ո՛չ, Արէզ: Ես գիտէի միայն, որ դու ոչինչ չգիտես քո մասին: Այդ իմ մօրը՝ Բարենանի կամքովս էր եղած: Նա ուրիշ Հնար չունէր այն չար պատուին վերացնել աշխարհից: Պէտք էր քեզ պէս մի անմեղ և ուրդար տնձն, որ մինչև անգամ չիմանար իր ինչ լինելը և տակի աղջիկ, քան տղայ Համարուէր: Դու երբ որ ինձ մօտ տեսար, քո կերպարանքը, տեսար որ տղայ ես, այսու ամենայնիւ դա քեզ Համար մի խաղ էր, որ ես խաղացի, ինչպէս որ դու իմ թիւերը վերցնելով՝ ուզեցար մի խաղ խաղալ: Միայն այս երեկոյին զգացիր, որ տղամարդ ես: Դու որ մեղադրում էիր ինձ, մենք թաքուն նստում էինք քեզ վրայ և ծիծաղում...

Յօղիկի այս ակնարկութիւնից ամօթի զգացմունքը առաջին անգամ զգաց Արէզը, բայց այնքան սաստիկ էր, որ նա կարմրեց վարդի պէս և ուզեց խօսակցութեան առարկան ուրիշ բանի վրայ դարձնել, լանկալծ միւս կողմից մի այնպիսի ծիծաղ բարձրացաւ, որ ամենքն էլ այն կողմը դարձրին իրանց ուշադրութիւնը:

Ջանադանն ու Ջարմանադանը պարում էին՝ մէկը վեղիւրի տղայի Հետ, միւսը՝ սպարապետի: Ծագիկիւ լսել էր նրանց վախոցը, նկատել էր, որ նրանք վաղուց աչքադրել են միմեանց, և այժմ էլ պատկուհիւ ցանկութիւն ունին, բայց ամաչում են ասելու:

—Նոր սէր, նոր ուրախութիւն, գոչեց ճաղկիկը մի բարձրաձայն ծիծաղով և նորահասներին քաշ տալով՝ տա-
րաւ թագաւորի մօտ և ասաց.—Մի պսակով ինչ պէտք է
լինի, երեքը միասին կատարեցէք:

Թագաւորն ու Արմանը նրանց էլ օրհնեցին և սկը-
սուեցաւ պսակների հանդէսը: Յօղիկը դարձաւ իբր պսա-
կադիր Նունուֆարի, ճաղկիկը՝ Զանազանի, իսկ Աղիւրիկը՝
Զարմանազանի: Պսակի օրհնութիւնը կատարեց թագա-
ւորը ճիւղածանի կամարի տակ, որ այդ փառաւոր հանդի-
սին աւելի ևս շքեղութիւն էր տալիս: Թագաւորն իր
թագն էլ դրաւ Արեգի գլխին, որով պսակեց նրան և թա-
գաւոր միանգամայն:

Դրանից յետոյ հրեղէն օրիորդները շնորհաւորեցին
նորապսակներին և պատրաստուեցան երթալու: Հազար
տեսակ քաղցրեղէններ՝ և մեղրաջրեր մօտ բերին, բայց հը-
րեղէնք նրանց համը չառան: Նրանք ուրիշ խմելիքներ
ունէին իրանց հետ բերած, նրանից խմեցին և խը-
մացրին նաև նորապսակներին, որոնք ակամայ խմեցին,
առանց նրա համն զգալու, բացի Արեգից, որին միայն էր
տուած նրա երկնային ճաշակն առնելու շնորհքը: Վերջը
մի շրջան կաղմեցին երկրայինք, և մինչդեռ հրեղէնք
վերանում էին ծխածանի սանդուղքով ասելով՝ մնացէք
բարե՛նա, բարե՛նա, բարե՛նա... Հողեղէնք էլ նրանց բարի ճա-
նապարհ էին մաղթում, երգելով՝

Գնացէք բարե՛նա, սիրուն աղջիկներ,
Դուք մեր Դաշտերի Անմահ Ոգիներ...
Այս ինչ շնորհք էր, ինչքան մեծ բարիք,
Որ դուք մարմնացած մեզ երևացիք...
Ա՛խ, երանի՛ թէ միշտ մեզ մօտ մնաք,
Որ ձեր տեսութեան կարօտը չզգանք...
Գնացէք բարե՛նա, բարե՛նա, բարե՛նա:

Հրեղէն աղջկերքը վերացան թէ չէ, մէջ տեղ եկաւ
ծաղրածուն և սկսուեցաւ մի նոր զուարճութիւն:

— Խնամի թաղաւոր, շէն կենայ քո հօր օջաղը, կե-
րանք, խմեցինք, լիացանք, ասաց ծաղրածուն և սկսեց
երգել—

Ախ թաղաւոր, թաղաւոր,
Ինչո՞վ ասեմ շնորհաւոր,
Ոչ հաց ունիս, ոչ զինի,
Իսպէս հարսնիք կըլինի՛...
Ետրալլալի, շտրալլալի,
Իսպէս հարսնիք կըլինի՛...

— Իբրեւ, միթէ հաց չպիտի ուտենք, ասաց թաղա-
ւորը: Մենք ամենքս էլ ամեն բան մոռացել ենք, որով-
հետեւ խելքներս կորցրել ենք, բացի լիմարից, որ խելք
չի ունեցել կորցնելու...

— Դու սխալվում ես, թաղաւոր, պատասխանեց լի-
մարը,— ես տեսայ որ դուք ամենքդ էլ իմ հացը կտրել
էք, գնացի մի ճոխ սեղան պատրաստել տուի, որ քաղ-
ցած չմնամ: Այս ասելով ծաղրածուն վազեց բաց արաւ
սեղանատան դռները, ուր լիրաւի, ճոխ ընթրիք կար պատ-
րաստուած: Հիւրերն սկսեցին թաղաւորի ետեւից ջուխտ
ջուխտ մտնել սեղանատուն: Ծաղրածուն տեսնելով, որ
ինքը մենակ պիտի մնայ, վազեց մեզ ծանօթ վեզերի կնոջ
մօտ և գլուխ վէր բերելով՝ երգեց--

Ով խելք ունի, սէր չունի,
Ով սէր ունի, տէր չունի,
Խեղճն ամենից լիմարն է,
Որ ոչ մի ընկեր չունի:
Արի, տիկին, ես ու դու
Չիտակ խօսք տանք մէկ մէկու,

Թէ «դու իմն ես, ես՝ քոնր».

Համաձայն ես, ձեռքդ տու...

Ասաց ծաղրածուն և տիկնոջ ձեռքից բռնելով միտ-
ների հետ մտաւ սեղանատուն...

Միւս սոսուօտուն սկսուեցաւ հարստների տօնախմբ-
ութիւնը քաղաքացոյց ու գիւղացոյց համար, և տեւեց մին-
չև քառասուն օր և քառասուն գիշեր: Ամեն մէկ օրը մի
բաղէի պէս էր անցնում, այնքան զտարձաղի էին: Ինչ
խաղեր, ինչ պարեր, ինչ ծաղրածութիւններ, մրցու-
թիւններ և հազար ու մի տեսակ օջիւններ...

Այն ու խումբին բնաւ հաշիւ չկար: Տասը հազար
միայն եղ ու կով մորթեցին, քսան հազար ոչխար, թող
վաղրի կենդանիները — եղջերուները, եղնիկները, վարանե-
րը, թող և թռչունները թէ տանու և թէ վաղրենի:
Քառասուն հազար սամար միայն բրինձ գնաց փութի հա-
մար, ինչքան եղ կերթար նրան, ինչքան չամիչ... Ին-
սուն հազար կարաս միայն գինի խմուեցաւ, չհաշուած
միւս քաղցրահամ և գառնահիթ խմիչքները...

Քառասուն օրից լեռու՝ Արեգը մի թեթեւ ճանապարհ-
հորդութիւն արաւ. Նանուֆարի հետ Վանայ ծովի վրայ:
Երբ որ ծովի ամենախոր տեղն էին հասել, Արեգը հա-
նեց չար պատառի կախարդական պառագոյնները, որանք
անցալոյ մետաղից էին, զժոխքի կրտսիս միտած, և ա-
սաց —

Ո՛վ պառագոյններ, գնացէ՛ք տնդունդ,

Որ էլ չիբեաք աշխարհիս վերայ.

Իշխանութիւնը չար ոգիների

Թողէ՛ք մեզանից իսպառ վերանայ:

Ո՛վ պառագոյններ, գնացէ՛ք տնդունդ,

Որ ոչ մի մարդու էլ չիշայնէ՛ք.

Կարէք յուխտեան, որ էլ ոչ ոքի
 Ազուա չշինէք կամ քաղաքներ:
 Թող թաղաւորէ բնութեան կարգը,
 Իլ այսուհետեւ նա չխանդարուի.
 Թող միայն Երկինքն իշխէ ամեն տեղ,
 Ամեն արարած Նորան խոնարհի...

Այս տակույ չետոյ զաւաղանները նետեց ծովի խոր-
 քը և չար սղինքի ու նրանց արբանեակները իշխանու-
 թիւնն ու զօրութիւնը վերացրեց աշխարհից:

Ահա այս ժամանակն էր, որ Երկինքից իջաւ.

ՆՐՆՔ ԽՆՁՈՐ

Արեգի ձայնը Երկինքը լսեց,
 Եւ իսկույն Երեք խնձար վալը դցեց.
 Մէկը կանաչ էր աչգ խնձորներից,
 Կարծես նոր քաղած դարնան ստերից.
 Երկրորդը կարմիր՝ վարդի հանդուճակ,
 Երրորդն սպիտակ՝ ձիւնի նմանակ:
 Նունուֆարն ստաց. — Արեգ, ինչ կտեսս,
 Այս խնձորները ինչու են պէտքս.
 — Չգիտեմ, հոգիս, ճշմարիտն ստամ.
 Գուցէ մեր կեանքն է ճիշտ օրինակում.
 Տես, տա կանաչ է, իբր խոտի, մանուկ,
 Իսկ աչա՝ սպիտակ, ինչպէս մի ծերուկ.
 Ամենից սիրուն կարմիրն է միայն,
 Գա է նշանը մեր հասունութեան:
 — Բեր այդ կարմիրը հէնց հիմա կտրենք,
 Եւ աշտեղ Լեւթ մկասին ուտենք...

Նունուֆարն ուղեց,
 Արեգն էլ կտրեց.

Կարմիր խնձորը միասին կերան,
 Եւ իրանց սրտի փափագին հասան:
 Ձեզ էլ կըցանկամ, սիրուն պատանիք,
 Որ մուրագներիդ նրանց պէս հառնիք:
 Կրխնդրեմ միայն որ ինձ էլ ներէք,
 Եթէ պատմածս ձանձրալի գտնէք:
 Ձեր սիրոյ համար ես աշխատեցի,
 Պատմեցի այնքան, ինչքան կարացի:
 Կարծելով՝ որ զուք սիրով կըկարդաք,
 Եւ խեղճ շայիբիս ողորմի կըտաք . . .

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ



ԱՄՊԵՐ

(Լեռնօճառուկից)



րինալին ամպեր, հանապազ պանդուխտ,
Սլանում էք դուք կապույտ կամարով.
Կարծես թէ, ինչպէս և ես, հալածված,
Հիւսիսէն հարաւ՝ մարդարտեայ շղթայով:

Ո՛վ է ձեզ քշում.—վճիռը բաղդի.

Պարզ թշնամութիւն, թէ՛ նախանձ վաղտնի.

Կամ ճնշում է ձեզ որ և է յանցանք,
Թէ՛ բարեկամաց կծու բամբասանք:

Ո՛չ. տաղտկացրիւ են ձեզ անպտուղ դաշտեր...

Հեռու են ձեզնից կիրք և չարչարանք.

Հանապազ սառը, յաւիտեան ազատ,


Չունիք հայրենիք. — չիք ձեզ հալածանք:

Ք. ԹԱԴԷՈՍԵԱՆՅ



ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՒՍ

Կոմս. Լ. Ն. Տօլստոյի „Лесная Поляна“-ը



ուս տկանջ գրաւ թաղաւորին, և թաղաւորն իր կողմից պապին զիւր գրեց, թէ «Մի ըստիւնար Հուսի վրայ, որ նա իմ կամքը կատարելով չէ հետեւում հրամանիդ, ժողովուրդը նրան շատ սիրում է և յարգում. եթէ նրան մի վատ բան պատահէր, ինձ կըմեղադրէին: Եթէ կամենաս, հրամայէ գատաւորներիդ, որ Պրազի մէջ հաւաքուին և նրան անյետեղ պատեն. իսկ քեզ մօտ դալու թողտուր թիւն նա չէ կարող ստանալ ինձնից»: Հոսն էլ ներողութիւն էր խնդրում պապից Հոսմ չերթալուն համար, և դրում էր. «Յարի մարդիկ խորհուրդ. չեն տալիս ինձ, որ քեզ մօտ դադնոտանի դամ. բայց եթէ քո գատաւորներն իրանք այտեղ դան, ես ամեն բանի հաշիւ կըտամ նրանց առջև»: Սակայն պապը թաղաւորի խնդիրը չյարգեց և մերժեց Հուսին եկեղեցուց: Հոսն էլ, աւելորդ վրդովմունքների առաջն առնելու համար, լաւ համարեց ու ժամանակ հեռանալ քաղաքից:

Նրա բացառաւթեան միջոցին Պրազ եկան պապի հարկահանները՝ փող հաւաքելու համար: Պապը շատ կարօտ էր փողի, որովհետեւ պատերազմ պիտի հրատարակէր: Նա առաքեց Պրազ երկու վարդապետ: Դրանք շրջում էին կառքով փողոցէ փողոց, առջևներեց պնում էր

մի թմբկահար. այդ միջոցին զանգերը հնչեցնում էին, ժողովուրդը ամեն կողմից հաւաքվում էր և վարդապետներն ասում էին. «Ո՛վ որ կամենում է մեղքերի թողութիւն ստանալ, թող միայն ինդուլգենցիա (թողութեան գիր) գնէ, և նրա մեղքերը քաւուած կըլինին»: Եկեղեցի կողոպտողից առնում էին 4 ոսկի, մարդասպանից՝ 7 ոսկի, կախարդութեան մեղք գործողից՝ 6 ոսկի: «Այս թուղթը գնողը Աղամից էլ աւելի անմեղ կըդառնայ», ասում էին վարդապետները, և ամենքը տանում էին իրանց ոսկին ինդուլգենցիա գնելու համար:

Մինչ վարդապետները այսպէս գովում էին ժողովրդին, հոս սկսաւ քարոզել Քեթղեհեմի մատուռի մէջ, որ ժողովուրդը ինդուլգենցիաների համար փող չվատնէ:— «Ձեզ խաբում են, ասում էր նա. առանց ապաշխարութեան և աղօթքի Աստուած ձեր մեղքերը չի թողնիլ»:— Հոսի խօսքերին հաւատ ընծայելով, ժողովուրդը վեր կացաւ պապի հարկահանների դէմ և ասաց. «Եթէ յօժար կամքով այս տեղից չհեռանաք, մենք ձեզ բռնի դուրս կանենք»: Այս բանի վրայ թագաւորը հրամայեց բռնել ապստամբներին և չարաչար պատժել:

Մի անգամ մի լատինական եկեղեցու մէջ պատէրները յորդորում էին ժողովրդին, թէ ո՛վ որ ինդուլգենցիա գնէ, նրա մեղքերը թողուած կըլինին: Ժողովրդի միջից մէկը կանչեց—«Այդ սուտ է, մեր վարժապետը (հոսը) ասաց, որ դուք մեզ խաբում էք»:

Այն ժամանակ քաղաքային վարչութեան զինուորները բռնեցին բազմութեան միջից երեք երիտասարդ և ասացին. «Ահա սրանք են ձայն հանողները, սրանք են խառնակիչները»: Երիտասարդներին տարին պատուհասելու: Հոս այդ որ իմացաւ, իսկոյն վագեց խորհրդարան՝ միջնորդելու, որ երիտասարդները չպատժուին: Գերմանացիք խօսք տուին, որ բռնուածներն անպատիժ կըմնան:

Բայց հէնց որ Հուս տուն վերադարձաւ, երիտասարդներին հրապարակ տարին և այնտեղ դահլիճը նրանց գլուխները կտրեց: Ժողովուրդն այս անցքին ականատես էր, բայց չկարաց ոչինչ անել, միայն թէ ուրտի խորքից նզովում էր բռնակալ գերմանացիներին: Դահլիճը երիտասարդներին գլխատելիս կանչեց. «Այսպէս կըլինի և բոլոր ըմբոստներին»:

Պատուհասը որ վերջացաւ, ժողովուրդը հաւաքեց մարմինները և տարաւ Բեթղեհէմի մատուռը: Այնտեղ սպանուածների վրայ հողեհանգիստ ասել տուին, երեք գերեզման փորեցին և կարդով թաղեցին նրանց: Ժողովուրդն ասում էր. «Անպարտ մեռան. մեր նահատակներն են սրանք, մեր վիաները, խեղճերը մեզ համար մահ կըրեցին»: Այն օրից սկսած գերմանացիներն առաւել ևս տետելի դարձան չեխերին:

Հուս սովորութիւն ունէր մի-մի ժամանակ քարոզ խօսելու ժողովրդին:— «Պապը շփանում է՝ Քրիստոսի փոխանորդ անուանելով իրան, ասում էր նա. բայց եթէ կամենում է յաղթել իր սոսիսներին, թող ուրեմն Քրիստոսի նման վարուի — թող աղօթէ թշնամիների վրայ, թող ասէ, «իմ արքայութիւնն այս աշխարհից չէ», թող բարի գործէ հակառակորդներին, ղթայ և օրհնէ իրան չար ասողներին. այն ժամանակ միայն ժողովուրդը կը հաւատայ, որ նա իրաւ սուրբ է և իմաստուն»:

Հուսի համբաւը փոքր առ փոքր տարածուեցաւ ամբողջ Չեխիայի մէջ: «Նրա դատը՝ մեր դատն է», ասում էին ամենքը: Թագաւորն աշխատում էր հաշտեցնել նրան պապի հետ, բայց չէր կարենում: Եպիսկոպոսը Հուսի վրայ զանգատ էր գրել պապին, թէ «Նա իր քարոզներով ժողովուրդը վրդովում է, թէ նա էր որ վռնտեց քո հարկահաններին, թէ նա է որ ժողովրդի մէջ հերետիկոսութիւն է սերմանում, ասելով, թէ Յիսուս Քրիս-

տոս մի հաւատ էր քարոզում, իսկ այժմ հաւատները շատացել են, թէ Քրիստոս իրան փոխանորդ չէ թողել, թէ սա լոկ պապական ստույգիւն է, թէ իսկական եկեղեցին արեւելեանն է՝ (հայկականը և յունականը) և թէ սա Քրիստոսի վարդապետութիւնն անաւել լաւ է պահպանել, քան թէ լատինական եկեղեցին»:

Պապը բանադրեց Հռոմի և արգելք դրաւ նրա բոլոր ծուխի վրայ: Երբ բանադրանք է դրվում մի որ և է քաղաքի կամ գիւղի վրայ, այն ժամանակ քահանաները ծէս կատարելուց՝ դադարում են, ժամասացութիւնն ընդհատվում է և կնուռք, պսակ ու թաղում չէ կատարվում, մինչև որ բանադրուած մարդն այն տեղից չհեռանայ:

Ահա թէ ինչ էր ասուած պապական բանադրանքի մէջ. «Բոլոր հաւատացեալները պարտական են խորշել Հռոմից: Եթէ նա քսան օրից մեղալի չգայ, այնուհետև ամեն կիւրակէ և տօն օր, հէնց որ եկեղեցիների մէջ մօմեր վառուին, թող նորից մարուին, գետնի վրայ ձգուին և ամեն մարդ կանչէ—«Անաթէմա Հո՛ւս»: Ոչ ոք չհամարձակուի այնուհետև մի որ և է գործ ունենալ նրա հետ. իսկ ով որ յանդգնի տալ նրան հաց, ջուր կամ իր տան մէջ ընդունել նրան, կամ մի բան գնել նրանից, կամ մի բան վաճառել նրան, կամ հետը խօսիլ,—այդպիսի լիրբն ինքը մերժուած կըլինի եկեղեցուց»:

Այս բանադրանքից դատ՝ մի ուրիշ հրաման էլ եկաւ պապից, թէ «Բռնել Հռոմի և յանձնել նրան արքեպիսկոպոսին կամ իսկոյն ալքել. իսկ Բեթղէհէմի մատուռը հիմնիվեր խորտակել»:

Ժողովուրդն այս որ լսեց, իսկոյն գնաց մատուռը պաշտպանելու: Կիւրակէ օր Հռոմն էլ եկաւ որ քարոզ ասէ: Բաղմուտիւնը շրջապատեց նրան, վախենալով որ թշնամիները նրան չբռնեն: Հուս ասաց. «Այս ի՛նչ յանդրդնութիւն է, որ գործում են այսօր գերմանացիք. ա-

ուաջ նրանք դրացու օջախն անգամ չէին համարձակում քանդելու առանց արքայական հրամանի, իսկ այժմ եկել են եպիսկոպոսի հրամանով Աստուծոյ տաճարը կործանելու»:

Քարոզից յետոյ Հուսի բարեկամներն ուղեկից եղան նրան դէպի տուն, որովհետեւ կասկածում էին թէ գերմանացիք որ և է բռնութիւն կրգործեն նրա դէմ, և պահապաններ դրին մատուռի մօտ, որպէս զի թոյլ չտան քանդելու նրան:

Հուս տեսնելով որ իր պատճառով կռիւներ էին պատահում, որ ժողովուրդը յուզվում էր, որ մանուկներն առանց մկրտութեան էին մնում և մեռելները՝ առանց թաղման, — խղճաց ժողովրդին և վճռեց հեռանալ քաղաքից, մինչև որ այս ամենը հանդարտի և պապն իր նզովքը այն ծուխից վերցնէ:

Նա գնաց մի գիւղ, ուր մի բարեկամ ունէր, և մընաց այնտեղ: Երբեմն դուրս էր գալիս տնից, մարդիկ էր հաւաքում դաշտի վրայ և ուսուցանում էր:

Պապն այդ միջոցին վճռել էր ժողով կազմել Կոնստանց քաղաքում: Սիգիզմունդ կայսրը, չեխացոց թագաւորի եղբայրը, մարդ զրկեց Հուսին, հրամայելով որ սա վերկենայ և ժողով գալ:—«Այստեղ ժողովի առջև կրչայտնես մեզ, թէ ի՞նչ է ուսմունքդ. ոչ ոք զրկանք չի հասցնիլ քեզ. դու ազատ կրլինիս անցկենալու որտեղից և կամենաս, և որպէս զի մեր բարեգթութեան վրայ կասկած չծագի մտքիդ մէջ, ահա՛ շնորհում ենք քեզ մի «ապահովութեան գիր», որով պատուիրում ենք տալ քեզ ազատ անցք մեր բոլոր երկիրների միջից և չպատճառել քեզ ոչ մի զրկանք»:

Նոյն հրովարտակի մէջ ասուած էր. «Մենք, Սիգիզմունդ, որորմութեամբ Աստուծոյ Կայսր գերմանական, թագաւոր հռոմէական, թագաւոր Ունգարիայի և այլն,

Լալլն, Լալլն. ընդունում ենք մեր հովանաւորութեան
ներքոյ գերապատիւ Հուս պրօֆեսսօրին և հրամայում ենք
ամեն պաշտօնականներին—թոյլ տալ նրան երթալ Կոնս-
տանց, մնալ այնտեղ և ազատ վերադառնալ, և որպէս զի
նրա անձն ապահոված լինի ո՞ր և է վտանգից, հրամայում
ենք տալ նրան թիկնապահներ»։—Ստորագրուած է. Կայսր
Սիգիզմունդ։

Հուս գրեց կայսրին. «Երբէք ոչ մի բան գաղտնի չեմ
ուսուցած, և այժմ խնդրում եմ միայն, որ ներուի ինձ
ժողովի մէջ ազատ ու համարձակ խօսելու, որպէս զի
ճշմարտութիւնն ամենքիդ յայտնի լինի և ամեն մարդ էլ
իմանայ, թէ ինչ է ուսմունքս և ինչ է յանցանքս։ Յան-
ցանքիս համար, միայն թէ սա ապացուցուէր, ես պատ-
րաստ եմ մահ անգամ ընդունելու 'ի սէր Յիսուսի Քրիս-
տոսի»։

Թէպէտև կայսրը խոստացել էր ոչ մի զրկանք չհաս-
ցնել Հուսին, այսու ամենայնիւ սրա բարեկամները խոր-
հուրդ չէին տալիս, որ Կոնստանց երթայ։ Բարեկամնե-
րից մինը, Գլօյկան, ասում էր. «Այստեղ քեզ յարգում են,
սիրում են, ամենքն էլ քեզ տէր կանգնելու պատրաստ
են. բայց հէնց որ մեզնից հեռանաս, գերմանացիք ան-
պատճառ դատաւիտ կանեն քեզ»։—Մի ուրիշ բարեկամ,
Հուսին բարի ճանապարհ մաղթելիս, ասաց. «Տէրը լինի
քեզ հետ. ինձ թւում է, սիրելի քաջ Եան (Յովհաննէս),
որ դու էլ վերադառնալու չես մեզ մօտ. թող ոչ թէ ուն-
գարական թագաւորը, հապա Երկնաւոր Թագաւորը հո-
վանի լինի քեզ՝ բարի խրատներիդ և լաւ-լաւ դասերիդ
համար»։

Հուս պատասխանեց. «Գիտեմ, որ շատ թշնամիներ
պիտի ունենամ. բոլոր եպիսկոպոսներն ու գիտնականնե-
րը, բոլոր իշխաններն ու փարիսեցիներն ինձ հակառակ են.
բայց հաւատացած եմ, որ Փրկիչն իմ Աստուած, աղօթ-

քիս լսելով, պարզ միտք և զօրեղ լեզու կրներշնչէ ինձ և օղնութեան կառաքէ Ս. Հոգին, որպէս զի ճշմարտութեան վրայ հաստատուն մնամ և դժոխքի դրունքն անդամ ինձ չչաղթահարեն: Ոչ բանտից եմ երկնչում, ոչ մահից: Եթէ մահս կարող է Աստուծոյ անունը փառաբանել, կաղաչեմ որ Նա ինձ քաջօրէն մեռնելու շնորհ պարգևէ: Գուցէ միւս անգամ չենք տեսնուիլ Պրագի մէջ. թող ուրեմն անդի աշխարհում կրկին տեսութեան արժանի անէ մեզ Աստուած»:

Հուսի բարեկամները, թէ հարուստ և թէ աղքատ, հանդանակութիւն արին նրա համար և ճանապարհի ծախք հաւաքեցին: Այս փողով նա գնեց իր համար մի սալ, մի զոյգ ձի, հազաւ քահանայական վերարկուն և ճանապարհ ընկաւ: Ամեն տեղ, ուր նա իջւանում էր, չէ-խերը դուրս էին գալիս նրան դիմաւորելու: Հուս ամենքին պատմում էր, թէ ուր էր գնում և ինչո՞ւ: — «Եթէ ես ձեր կարծիքով խաբեբայ եմ, ասում էր, եկէ՛ք Կոնստանց և ստուգիւնս ապացուցէ՛ք»:

Երբ նա անցնում էր գերմանական երկիրներից, գերմանացիք, լսած լինելով, թէ ուղևորը չէխերի քարոզիչն էր, հաւաքվում էին նրա արդար խօսքերը լսելու և պատուում էին աղ ու հացով: — «Այստեղի գերմանացիք մեզ մօտ Պրագում գտնուողներից բարի են», ասում էր Հուս: Հուսին ուղեկցում էին երկու թիկնապահ ասպետներ: Նոյնմբրի Յին նա հասաւ Կոնստանց. բոլոր բնակիչները նրան դիմաւորելու դուրս ելան և նա իջաւ մի այլի կրնոջ մօտ, որ աչնուհետև կոչուեցաւ «սարեալտական ալ-րի»: Այս կինը նրան շատ յարգում էր:

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Կըշարուհակուի)



ԸՆՏԱՆԵԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

(Դիսանդէից)



Գ.

Էրը շատ անգամ ինքը լրացնում է շատ պակասութիւններ: Օրինակ՝ օդի ճնշող ուժի ազդեցութիւնը իմանալու համար՝ մեզ բաւական են մի բաժակ, մի սփռէ և քիչ ջուր: Վերցնենք մի փոքրիկ խցանի կտոր, վրան ամրացնենք մի կտոր թուղթ. ավստէն ածենք ջուր. խցանը թղթով դնենք այդ ավստէի ջրի երեսին. վառենք թուղթը և վրան փակենք իսկոյն բաժակը. թուղթն այրուելով, բաժակի մէջ պարունակած օդի մի մասը ծախում է. արդ, դրսի օդը ծանրանալով ջրի վրան, ճնշում է նրան և մղում է բաժակի մէջ գոյացած դատարկութիւնը լցնելու: Մինչդեռ բաժակը գիտէք որ բերնի վրայ խոթելով ջրի մէջ, վերջինս չի բարձրանում նրա մէջ, ընդդիմահարուելով այնտեղ եղած օդի ներկայութիւնից: — Էլի մի օրինակ, բաժակը լիքը ջրով ծածկում են մի կտոր թղթով. ապա զգուշութիւնով և յանկարծ բաժակը գլխավալը շրջում. արտաքին օդի ազդեցութիւնից, որ ճնշում է թղթի մակերևոյթին, թերթը չի պոկվում բաժակից և ջուրը չի

Թափվում նրա միջից: — Ախր ջրով շիշը բերանին դրէք մատերնիդ և ապա գլխիվայր շիշը մտցրէք ջրով լիքը սկաւառակի մէջ և մատներդ վերցրէք շշի բերանից, դուք կրնկատէք, որ վերոյիշեալ օրէնքի զօրութիւնով ջուր չի թափվում շշից: Ուրիշ բան է եթէ շշի մէջ լինի կաթ կամ ուրիշ հեղանիւթ, այն ժամանակ զանազան նօսրութիւն ունեցող հեղանիւթեր տարբեր կերպով են իրար վրայ կանգնում. եթէ շշի մէջ կաթ է օրինակ, կաթը կըթափուի ջրի մէջ, իսկ շիշը կըբարձրանայ ջուրը: Զանազան անօսրութեան հեղանիւթերը իրար հետ չեն խառնվում, ամենից թանձրը կամ ծանրը ամենից տալին է ընկնում, աւելի թեթեւները վեր են բարձրանում. օրինակ՝ եթէ ածեւք մի անօթի մէջ հաւասար չափով սընդիկ, աղաջուր, սպիրտ և իւզ, ու ինչքան էլ չխառնենք դրանց, այնու ամենայնիւ նրանք իրար վրայ շերտեր կադմած անխառն կրկանգնեն:

Վեր առէք որ և է դրամ և նրան մի քանի անգամ շփեցէք տախտակէ պատին և թողէք. դրամը չի ընկնի. դրա բացատրութիւնը այս է. դրամը շփուելով տախտակին, անցաւ այն օդը, որ կար տախտակի և դրամի արանքում. ապա դրսի օդը բաւական էր, որպէս զի իր ճնշող ոյժով կարողանար կլլած պահել դրամը տախտակի վրայ:

Մի բաց շիշ կամ գրաֆին, ի հարկէ լիքն է օդով. վառում եմ մի կտոր թուղթ և ձգում եմ այդպիսի մի գրաֆինի մէջ. մի քանի վայրկեան նրան վառուելուց, դրնում եմ գրաֆինի բերնին բաւական պինդ եփած և կճեպած ձու. թուղթը այրուելով ջրամանի մէջ ծախում է այնտեղ եղած օդի մի մասը, դրսի օդը ճնշելով ձուին, նրան մղում մտցնում է գրաֆինի մէջ, ուր նրան արգելք չէ լինում օդը, վասն-զի արդէն այրուել է:

Վեր առնենք մի դրամ և նրա չափ մի կլորիկ թուղթ և երկուսին վայր ձգենք գետին. երկուսն էլ երկրի ձգողական ոյժի ազդեցութիւնով կընկնին գետին, բայց դրամը աւելի շուտ կըհասնի գետին քան թղթի կտորը, որովհետեւ դրամն աւելի թանձր է, ուստի նա քիչ է ենթարկվում օդի ընդդիմադրութեան, իսկ թուղթը աւելի բարակ լինելով օդը նրան ընդդիմանում է և արգելք է

լինում երկրի ձգողական ոյժին արագ և միանգամից իրան քաշելու նիւթը:

Բացի երկրի ընդհանուր ձգողական ոյժից, երկրի վերաբերութեամբ ունեցած մասնական ձգողական ոյժի նրկատելն էլ շատ հեշտ փորձերով կարելի է տեսնել. օրինակ մի աման ջրի մէջ ձգենք խցանի փայտի երկու կրտորներ. եթէ զրանց մօտեցնենք իրար այնքան որ նրանց միջի տարածութիւնը հաւասար լինի կէս դիւյմի, այն ժամանակ նրանք իրար կրկպչին այնպիսի արագութիւնով, ինչպէս երկաթը մօտենում է մագնիսացրած պողպատին:

Եթէ մի մարմին ոյժի ազդեցութեան տակ ներգործում է մէկ ուրիշ մարմնի վրայ, այն ժամանակ այս վերջինն էլ միևնույն ուժգնութիւնով և ուղիղ հակադիր ուղղութիւնով ազդում է կամ ներգործում առաջինի վրայ. այդ սկզբունքը այսպէս էլ է բացատրվում. մի ներգործութիւն յառաջ է բերում իրան հաւասար հակառակ ներգործութիւն:

Ի ներքի աի — առաձգականութեան ոյժը պարզելու համար ցոյց կըտամ մի քանի շատ հասարակ փորձեր:

Իմ մի բարեկամը շատ յաջող կերպով անում էր հետևեալ փորձը. երկու իրարից տարակալ աթոռների նրստոցի ծայրերին դնում էր բաժակներ. դրանց վրայ երկու ծայրերին ասեղ ամրացրած մի ձող էր դնում. ապա մի ալլ հաստ մահակով ամենայն ոյժով և մի ակնթարթում զարկում էր լիշեալ ձողի բուն կենտրոնին, որ իսկոյն կտրվում էր երկու մասի, առանց ամենևին վնասելու բաժակներին: Այդ երևույթը բացատրվում է խփող փայտի իներցիայով. արագագոյն զարկելով — հարուածը ազդում է առարկայի միայն կենտրոնական մասերին, էլ չի ժամանում որ ալլ մասերից ոյժը հաղորդուի մօտակալ մասերին. նա բաժանվում է յառաջ քան շարժողութիւնը կանցնէր և ծայրերի մասնիկներին:

Գնտակը, որ հրացանից արձակուած, վերին աստիճանի արագութիւնով սլանում է, պատուհանի ապակիում գործում է միայն մի կլորիկ ծակ, որով և անցնում է առանց փշրելու ապակին. նոյն գնտակը եթէ ձեռքով զարնենք պատուհանի ապակուն, սա փշուր-փշուր կըվառնայ:

Այլուիկ դրամները իրար վրայ դարսելով կազմեցէք մի սիւնակ. ապա ամենայն արագութիւնով քանոնի կողով զարկեցէք ամենատակի դրամին. սա ղուրս կըլծուչի, առանց որ սիւնակը քանդուէր, այդպէս շարունակ մինչև վերջին դրամը:

Աւելորդ չլինի լիշեւ, օվը շարժողութեան ենթարկուելով, յառաջացնում է մի և նոյն մեքենական զարժողութիւնները, որպէս և այլ մարմինները: Յընակ եթէ օղու բաժակի մէջ գնենք մի ձու և փչենք ձուի ու բաժակի կողմ մէջ եղած պարսպ տեղի օդի վրան, հետզհետէ մեր փչելով ձուն ոչ միայն ղուրս կ'ելնէ բաժակից, այլ և կարող է մօտը դրած միւս բաժակի մէջ ընկնել, եթէ մեր թոքերն այնքան զարգացած են, որ կարողանանք լաւ ուժով փչել:

Հարեցէք սեղանի վրայ՝ իրար կալած ուղիղ զծով մի քանի դրամներ, մէկ ուրիշ դրամով խփեցէք այդ շարքին: Դրանից շարքը չի քանդուի, իսկ հակառակ ծայրի մի դրամը հարուածի պատճառով, որ իրան հաղորդուեց միջին դրամների առաձգականութիւնով, դէն կըփախչի թէ երկու դրամով միաժամանակ զարկէք շարքին, հակառակ կողմից էլ երկու դրամ դէն կըաժանուի և այլն:

Կեդրօնախոյս ոյժի մասին էլ մի դադափար կազմելու համար առ այժմ կարելի է առաջարկել հետևեալ երկու հեշտ փորձերը:

Վեր առնենք մի ունկնաւոր աման լիքը ջրով. ունկներից կապենք թուկ և սկսենք անուաձև գլխովէր պտտել նրան. կընկատենք որ ջուրը անօթից չի թափվում, երբ նրա յատակը իսկ նայում է ներքև:

Գարձեալ վեր առնենք անձեռոցի օղակը և ցուցամատնիս նրա մէջ գնելով, արագ-արագ պտոյտ տանք մեր մատը: Կընկատենք որ անձեռոցի օղակը մեր մատի վրայով սեղանի երեսից բարձրանում է և պտոյտ է գալիս մեր մատի շուրջը օդի մէջ: Սիրեցէք լսել, սիրեցէք դիտել, սիրեցէք փորձել:

Ն. ՏԵՐ-ԱՌԵՏԻՔԵԱՆ



ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ո՞վ կըհաւատար: — Այժմ արդէն կայ հեռախօսական լար Բրեւսելի եւ Փարիզի մէջ: Բելգիայի թաղումին նորերս կամեցաւ փորձել, թէ արդեօք կըյաջողի լսել օսերան Փարիզեց հեռախօսով — տելեֆօնով: Արդ թագուհին իր պալատում նստած ականջը դրած լարին, օրի մի ծայրը Փարիզում բեմի վրայ էր՝ լսում էր հոգեզմայլութեամբ „Փառւտ“ օպերայի ներդաշնակաւոր եղանակները բոլորովին որոշ կերպով: Մի քանի տարի առաջ ով կըհաւատար այս բանին:

Առձեռն կամ գրպանի կարէ մեքենայ: — Անգլիայում այժմ պատրաստում են կարի մեքենաներ $\frac{1}{4}$ արշին երկարութեամբ եւ մի վերջով լախութեամբ. ծանրութիւնը մի ֆունտից աւելի չէ: Այսպիսի մեքենան շատ յարմար է ծանապարհորդութեան ժամանակ, որովհետեւ կարելի է գրպանում պահել:

Փողոցներէ մաքրելը ձեւերից: — Ուղիղ մի տարեւ սրանից առաջ Փարիզում եկաւ չտեսնուած մեծ ծիւն, սակայն մի երկու ժամից յետոյ այդ մեծ ծիւնի հետքն անգամ չկար համաշխարհային քաղաքի փողոցներում: Ահա ինչումն է գաղտնիքը: Ծովային աղը եթէ ցանուի, խառնուի ծիւնի հետ, վերջինս իսկոյն հալւում է եւ դառնում է թանձր հեղուկ, որը մասամբ սրբվում է եւ մասամբ թափ-

վում է քաղաքի անմաքրութիւնը անցկացնող խողովակների մէջ: Դրա համար քաղաքային ամբարանոցներում մշտական պահվում է ծովային աղի մեծ քանակութիւն, որի փութը արժէ 20 կոպէկ. հէնց որ ծիւնը գալիս է, իսկոյն յիշեալ աղով բարձր սայլերը պտտում են քաղաքի փողոցները սփռելով ծիւնի վրայ ծովային աղի աւազը:

Շոգէաղաց Մոսկուայում: 6 տարի առաջ Մոսկուայում կառուցուեցաւ մի վիթխարի շոգէաղաց, որի շինութիւնը բաղկացած է 10 յարկից եւ արժէ 800,000 ռուբլի. այժմ դա գրաւում է ամենքի ուշադրութիւնը իր օրինակելի կազմակերպութիւնով եւ ծաղկեալ վիճակով. այդ քարաշէն տասը յարկանի հսկայական գործարանում բանում են միայն 12 բանուոր — մշակ, որովհետեւ ամեն աշխատութիւնները կատարում են մեքենաները շոգիի ոյժով: Մեքենաները ցորենը կտմ աղալու այլ հատիկները փոխադրում են մէկ յարկից մյուսը. խարբալում են ցորենը, մաքրում են, ջրկում են տեսակների, աղում են եւ ալիւրը լցնելով պարկերի մէջ, իջեցնում են ամբարը: Շոգէաղացի վառելք տարեկան նստում է 50,000 ռ., տարին աղացվում է այտեղ 1,000,000 պարկ ալիւր. տարեկան 80,000 հազար ռուբլու կրտաւ է դնում պարկերի համար եւ այլն:



ՎԻԿՏՈՐԻԱ ԹԱԳՈՒՀՈՒ ՅՕԲԵԼԵՍՆԸ

Անգլիայի Վիկտորիա թագուհին լրացնում է իր կայսրութեան չիսնամեակը յառաջիկայ յունիսի 4-ին: Վիկտորիա կայսրուհին դեռ աղջիկ էր տասնութամեայ, երբ բաղմեց իր պապերի գահի վրայ: Անգլիական իշխաններից մի ռզնիւ և խելօք ամուսին ընտրեց նա իր համար, որը ի հարկէ մասնակից չէր իր կայսրուհի կնոջ իշխանութեանը. այդ սոսկ ամուսնու, որ շատ նշանաւոր մարդ էր և որ առաջին անգամ յղացաւ և իրազործեց աշխարհանդէսների գաղափարը, — վախճանութիւնը յետոյ՝ կայսրուհին մնաց այրի մինչև հիմա: Այժմ ամբողջ անգլիական պետութիւնը պատրաստութիւն է տեսնում այդ նշանաւոր օրի տօնախմութիւնը կատարելու համար. բոլոր անգլիական քաղաքները և գիւղերը պիտի բարեզործական ձեռնարկութիւններ անեն ի մշտնջենական յիշատակ այդ մեծ օրուայ: Լօնդոնում, բացի զրանից, մտադիր են մի աշտարակ կանգնեցնել 450 ոտնաչափ բարձրութեամբ: Ասում են որ մտադրութիւն կայ այդ օրը թագուհուն ընծայաբերելու մի ձեռք վերնազգեստ՝ ամբողջապէս կազմած ջայլամի փետուրներից. սակայն խնդիր է, թէ թագուհին այդ անօրինակ զգեստով դուրս կըզան արդեօք ժողովրդի առաջ:



ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ.

Ուշիմ պատանիք, ինձ ականջ դրէք,
Եւ ասածներիս լաւ միտ դարձրէք:

Ամեն արարած ուզում է ապրել,
Եւ իրա կեանքը գիտէ պաշտպանել:
Որին տուած է սուր-սուր եղջիւրներ,
Որին մի խալթոց, որին ժանիքներ,
Որն ունի փշեր, որն ամուր պատեան,
Որն էլ թոյնով է պաշտպանում իրան.
Թող լինի մօղուկ, կամ փիղ ահագին,
Նա ունի մի գէնք պաշտպան իւր անձին...
Եւ այս պատճառով ինչեր ենք տեսնում—
Հարունակ կռիւ, անրնդհատ մրցում,
Ջնջաւոր, անշունչ, թէ մարդ, թէ գազան,
Խորտ տիեզերք, տարերք ամենայն,
Էլ չեն հարցնում ոչ բարի, ոչ չար,
Ճնշում են միմեանց, մղում են զիրար.
Եւ այդ կռուի մէջ՝ ուժեղը թողին
Յաղթում է անշուշտ և հանում հողին...

Հիմա միտք արէք մէկ դուք ձեզ ու ձեզ,
Թէ սա ինչ բան է, ինչո՞ւ է այսպէս...
Նա, որ ամեն բան շինեց, ստեղծեց,
Ինչո՞ւ մի այնպէս օրէնք չդրեց,
Որ ամենայն ինչ իւր տեղը կենայ,
Ոչ մէկը միւսին մի վնաս չտայ...
Ահա մի ինդիւր, որ կուգեմ տեսնել,
Թէ ո՞վ ձեզանից կարէ լաւ վճռել...

ՀԱՐԱՇ

Դ.

Մեր բայերի հրամայական ձևերը վերջաւորվում են —
ի՛ր կամ է
Օրինակ — գրիր, գրէ. սկսիր, սկսէ. խօսիր, խօսէ. և այլն:
ԲՈՒ կամ ՈՒՐ

Օրինակ Հագցրու. հագցուր, կշտացրու, կշտացուր. և այլն:
Ա

Օրինակ — ասա, արա, աղա, մնա, խնդա, հաւատա, յուսա, և այլն:

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ

Օրինակ — առ, բեր, դիր, եկ, թող, լաց, կեր, կաց, կալ, տուր, տես, տար, և այլն:

Ով որ կրդտնէ տասը հատ ինքնուրոյն վերջաւորութեամբ հրամայականներ, նա կըստանայ առսոնձին կազմած մի Արեգնազան:

Ղ*

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ



«Ազագամի»

զազամի՝ գլխաւորապէս աղջիկներն են խաղում: Հաւաքվում են 16 — 20 կամ աւելի հոգի և թուով երկու հաւասար կարգ կազմելով՝ կանգնում են իրար դիմաց կռնաբռնուկ:

ա. Կարգից աւելի մեծ աղջիկը ձայն է տալիս. Ազագամ. — «Ազրիգագամ», պատասխանում է միւսնոյն կերպով բ. կարգի մի ուրիշ աղջիկ: — Դովիթամ. «Դովթիմիշամ»: — Մէլիբամ: — «Մէլիբիշամ. բեր-բի-չօղին գիգի հարսը գցի՛ր—գայ»:

Այս խօսքերի վրայ իսկոյն մի աղջիկ ա. կարգից զըզ զընած գնում է ընդհարվում բ. կարգի երկու աղջկայ կռներին. եթէ նրան յաջողուեցաւ նրանց միմեանցից բաժանել, ուրախ-ուրախ բռնում է այդ երկուսի կըռ-

ներից և թուշկոտալով բերում է, միացնում իրանց կարգի
Հետ, և յետոյ ուրիշին ուղարկում նոյն կերպով: Իսկ ե-
թէ չէ կարողանում նրանց բաժանել, այն ժամանակ միև-
նոյն խօսքերը կրկնելով բ. կարգից է ուղարկվում «զիզի
Հարսին»:

Այսպէս խաղալուց յետոյ յաղթողը այն կարգն է
լինում, որի խաղացողուհիները քջանում են անցնելով
միւս կողմը:

ՍՐԻՆԳ

Ր Ե Ռ Ո Ւ Ս



ՊԱՏԱՍԻԱՆ

«Առաջարկութեան» № 2-ի

1.

Ղատ էլ որ փնտրես,
Ո՞րտեղ կը գտնես—
Քաջառողջ տկար,
Իմաստուն տխմար,
Վիթխարի թզուկ,
Անվեջներ Ստրուկ...

Ո՛չ, իմ սիրելի բարեկամ Հաբաշ,
Թէկուզ ընծայես ինձ մի գիրք շաբաշ,
Չեմ կարող գտնել քո ուղած բանը,
Ո՛չ մեր աշխարհում և ոչ մեր տունը...

ԹՕՄԱՍ

Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկի բացատրութիւնը. 2) Սիս:

ԳՐԵՑԼԻ ԱՅՍ ՆԿԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ:

